Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի

Պատասխաններ-10-րդ դասարան

1. Հազար ինը հարյուր վեց **թվականն էր**: Կոմիտասը մեկնեց Փարիզ՝ մասնակցելու երգարվեստի համաշխարհային փառատոնին: Նա զօրուգիշեր տքնաջան աշխատում էր՝ ըմբռնելով, որ իր արվեստով օտար ունկնդրին պատկերացում պիտի տա Հայաստանի և հայ ժողովրդի՝ մինչ այդ աշխարհին անծանոթ մշակույթի մասին:

Լեփ-լեցուն է Փարիզի սյունազարդ սրահներից մեկը. շուրջբոլորը ծաղկեփնջեր են, դահլիճում՝ խստապահանջ հանդիսականներ, բեմին՝ մեծահամբավ երաժիշտներ:

Ահա բեմահարթակ դուրս եկավ սևամորուս մի այր՝ երկարաքղանցք սքեմով ու վեղարով, և դահլիճը միանգամից փոթորկվեց. ո՞վ է այդ հոգևորականը և ի՞նչ է անելու, **ինչպե՞ս** կարող է հաղթել համաշխարհային աստղերի մրցույթում: Զսպելով հոգու ալեկոծությունը՝ Կոմիտասը դահլիճի հարցական հայացքի ներքո մոտեցավ **դաշնամուրին**՝ ներքուստ զգալով թպրտացող սրտի **թրթիռը**:

Երբ սրահը լցվեց վարդապետի՝ հոգին պարուրող ղողանջներով, դահլիճը համրացավ. մարդկանց թվաց՝ ժամանակը կանգ է առել, ու իրենք, երկրային **աշխարհից** անէացած, հայտնվել են տիեզերական անեզրության մեջ:

Այդ օրը Կոմիտասը դարձավ երգի համաշխարհային փառատոնի դափնեկիր:

2. **թվականն էր**- բաղադրյալ ստորոգյալ, **ինչպե՞ս**-ձևի պարագա, **թրթիռը**- ուղիղ խնդիր, **դաշնամուրին**-հանգման խնդիր, **աշխարհից**-անջատման խնդիր

3. <u>տ</u> + <u>քն(քուն)</u>+ ա + <u>ջան</u>, <u>լեփ-լեց</u> + <u>ուն</u>, <u>բեմ</u> + ա + <u>հարթ</u> + <u>ակ</u>, <u>ալե(ալի+ա)</u> + <u>կոծ</u> + <u>ություն</u>, <u>տի</u>+ <u>եզեր</u> + <u>ական</u>, <u>երկար</u> + ա + <u>քղ(քուղ)</u> + <u>անց</u> +<u>ք</u>,

4. հազար, մեկնել, իր, մասին, այր, վարդապետի, երգի

5. **պարեգոտ**- պատմուճան, թիկնոց, երկար վերնազգեստ և այլն, **կռուփ**- բռունցք, մուրց, **ծխնի**- դուռը շրջանակին ամրացնող բացվող-փակվող հարմարանք, **շափյուղա**-կանաչ կամ կապույտ թանկարժեք քար, **հորջորջել**-1. անուն դնել, անվանել, կոչել, 2. մականուն դնել, վերադիր անուն դնել, **երախայրիք**- 1.առաջին պտուղ՝ բերք, 2.առաջին ստեղծագործություն, աշխատանքի առաջին արդյունք

6.**ա.** ամպամած, միգամած (երկինք), **բ.** մութ, խավար, **գ.** մուգ գույնի, գորշ, սև (զգեստ), **դ.**տխուր, թախծոտ, **ե.**անհրապույր, ոչ պայծառ (տեսարան, սենյակ), **զ.**խոժոռ, անբարեհամբույր (դեմք), **է.**տխրությամբ լցված (մտքեր), **ը.** Ճնշող տպավորություն՝ տրամադրություն (կիրճ), **թ.**ծանր, անհեռանկար (օրեր)

7.**սիրտ առնել**- համարձակվել, խիզախել
սիրտը առնել- բարկությունը անցկացնել, սիրաշահել, ամոքել,
սիրտը ելնել-հուզվել, բարկանալ,
սիրտը բացվել-տրամադրությունը լավանալ, ուրախանալ,

8. **երախտիք**-ուրիշին արած բարի գործ, բարերարություն, արվեստի՝ գիտության բնագավառում թողած մեծ ավանդ,
երախտագիտություն- երախտիքը գիտենալն ու գնահատելը, շնորհակալություն,
հրաձիգ- 1.հրացանով վարժ՝լավ կրակող մարդ, 2. հրազենով կրակող մարտիկ՝ զինվոր,
հրձիգ 1. կրակ թափող, 2.կրակ տվող, հրդեհող, 3. բորբոքող, հրահրիչ, որևէ բանի դրդող:

Գնահատման չափանիշներ - 10-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Բնագրի ճիշտ կետադրության համար տրվում է 6 միավոր:
   Յուրաքանչյուր կետադրական ոչ ճիշտ նշանի համար հանվում է 1 միավոր:
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 6 միավոր:

Եթե արմատը կամ ածանցը ճիշտ ընդգծված չէ, միավոր չի տրվում:

4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր
   Եթե տվյալ բառազույգի բառերից մեկը ճիշտ մեկնաբանված չէ,
   ապա բառազույգի համար միավոր չի տրվում:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 6 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
9. Շարադրության համար տրվում է 10 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր, կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր:

Յուրաքանչյուր առաջադրանքի ավել գրած սխալ պատասխանի համար հանվում է 1-ական միավոր: